ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ Արգամ Արամյան՝ 2024թ. ապրիլի 14-ից 21-ը ներառյալ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արգամ Արամյան, ՀՀ ֆինանսների ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ք. Վաշինգտոն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, 2024 թվականի ապրիլի 14-ից 21-ը

3. Հրավիրող կողմը՝

Արժույթի միջազգային հիմնադրամ (ԱՄՀ), Համաշխարհային բանկ (ՀԲ)

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի խմբի Կառավարիչների խորհուրդների գարնանային հանդիպումներին:

5. Քննարկված թեմաները՝

ԱՄՀ/ՀԲ գարնանային հանդիպումները հնարավորություն են տալիս բարձրաստիճան հարթակում համաշխարհային ֆինանսատնտեսական միջավայրում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ քննարկումներ իրականացնել, երկկողմ հանդիպումներ ունենալ միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և ներկայացուցիչների, միջազգային կապիտալի շուկայում ներդրողների հետ, քննարկել նաև համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր, ինչպես նաև մասնակցել գլոբալ մարտահրավերներին առնչվող միջոցառումներին:

ԱՄՀ/ՀԲ 2024թ. գարնանային հանդիպումների ժամանակ քննարկումները ծավալվել են այնպիսի կարևոր ոլորտների շուրջ, ինչպիսիք են՝ համաշխարհային տնտեսությունը, միջազգային տնտեսական իրավիճակի զարգացումները, արդի մարտահրավերները, համաշխարհային ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակը, ֆինանսական ոլորտի զարգացումները, իսկ երկկողմ հանդիպումների ընթացքում կողմերն անդրադարձել են նաև ընթացիկ և հետագա համագործակցությանն առնչվող հարցերին:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Վաշինգտոն այցի առաջին օրը մեկնարկել է ԱՄՀ գործադիր տնօրենի տեղակալ Բո Լիի հետ հանդիպումով, որի ընթացքում ՖՆ կողմից ներկայացվել է ՀՀ մակրոտնտեսական

իրավիճակը, անդրադարձ է կատարվել ՀՀ կառավարության բարեփոխումների ընթացիկ օրակարգին, ԱՄՀ եռամյա Պահուստային ծրագրին և վերջինիս ներքո երրորդ վերանայման աշխատանքներին ու գրանցված արդյունքներին: Շնորհակալական խոսքով են հանդես եկել ՀՀ կառավարության բարեփոխումների օրակարգին ԱՄՀ շարունակական աջակցության համար՝ հատկապես տեխնիկական աջակցության գործիքների միջոցով: Իր հերթին ԱՄՀ կողմից պատրաստակամություն է հայտնվել հետագայում ևս շարունակելու աջակցությունը:

Հաջորդիվ առանձին հանդիպումներ են կայացել նաև ՀԲ կրթության և տրանսպորտի թիմերի հետ, որոնց ընթացքում կողմերը քննարկել են նշյալ ոլորտներում համագործակցության հեռանկարները: Կրթության թիմի հետ հանդիպման ընթացքում քննարկումը հիմնականում ծավալվել է կրթության ոլորտում նոր՝ «Ծրագիր արդյունքի դիմաց» աջակցության ծրագրի, «Ակադեմիական քաղաք» նախաձեռնության՝ մասնավորապես՝ վերջինիս հայեցակարգի, ընդհանուր արժեքի, ՀԲ հետ հետագա գործողությունների ծրագրի ու քայլերի հաջորդականության շուրջ:

ՀԲ ներկայացուցիչների հետ նաև քննարկվել է արագ ֆինանսավորման ՀԲ տիրույթում համար հասանելի գործիքակազմը և դրանցից ըստ անհրաժեշտության օգտվելու հնարավորություններն ու մեխանիզմները:

Տրանսպորտի թիմի հետ հանդիպումը հիմնականում նվիրված էր Չինաստանը Եվրոպային կապող «Միջին միջանցքին» և վերջինիս Հայաստանի մասնակցության հնարավորություններին: Կարևորվել է նշյալ միջանցքին Հայաստանի մասնակցությունն ու միջանցքի համադրելիությունը «Խաղաղության խաչմերուկ» հայեցակարգին: ՀԲ կողմից տեղեկացվել է, որ ՀԲ փորձագետների կողմից արդեն իսկ կատարվել են որոշակի վերլուծություններ «Միջին միջանցքում» Հայաստանի ներգրավման, և, ըստ այդմ, Հայաստանով անցնող ճանապարհների վերաբերյալ: Երկուստեք կարևորվել է այդ ուղղությամբ բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ աշխատանքների ակտիվացումն ու շարունակականությունը. առաջարկ է հնչել նաև ձևավորել աշխատանքային խումբ ՀՀ ՖՆ, ՏԿԵՆ ու Ասիական զարգացման բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ հաշվի առնելով, որ ԱԶԲ-ի կողմից ևս նշյալ ոլորտում մանրամասն ուսումնասիրություններ ու վերլուծություններ են կատարվել: Բարձրացվել է նաև հիշյալ աշխատանքներում տեխնիկական աջակցության ներգրավման անհրաժեշտությունը:

Նշենք, որ ՖՆ պատվիրակությունը մասնակցել է նաև «Միջին միջանցքի» ներքո համագործակցության և խաղաղության նախաձեռնությունների վերաբերյալ ՀԲ կողմից կազմակերպված քննարկմանը, որին մասնակցում էին Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

ՀԲ գործընկերների հետ սերտ համագործակցությամբ հայկական պատվիրակության համար կազմակերպվել է նաև «Արտոնյալ ֆինանսավորման գլոբալ գործիքի հիմնադրամի» առանձին հանդիպում, որին մասնակցել են Հիմնադրամի դոնոր հանդիսացող մի շարք երկրների ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում ներկայացվել է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց առաջնային կարիքների հասցեագրմանն ուղղված ՀՀ կառավարության աջակցության ծրագրերը, ինչպես նաև մշակվող միջնաժամկետ ծրագրերի վերաբերյալ մանրամասներ: Վերջինիս շրջանակներում հատուկ շեշտադրվել է բռնի տեղահանված անձանց բնակարանային ապահովման առաջնահերթությունը:

Դեռևս 2023թ. դեկտեմբերի 11-ին Հայաստանի Հանրապետությունը դարձել է ՀԲ կողմից հիմնադրված «Արտոնյալ ֆինանսավորման գլոբալ գործիքի հիմնադրամի» («Global Concessional Financing Facility», Հիմնադրամ) շահառու, որի նպատակն է աջակցել փախստականներ ընդունող երկրներին: Նիդերլանդների կառավարությունն արդեն իսկ հիմնադրամին թիրախային՝ Հայաստանի օգտին հատկացրել է 10 միլիոն եվրո, ԱՄՆ-ն՝ 5 միլիոն եվրո:

Մեկ այլ հանդիպում կայացել է Հայաստանն ընդգրկող երկրների խումբը համակարգող գործադիր տնօրեն Եվգենի Ռուգենաթի հետ: Հանդիպման ընթացքում կողմերն անդրադարձել են ինչպես ընթացիկ համագործակցությանն առնչվող հարցերին, այնպես էլ առաջիկայում ջրային, առողջապահության և էներգետիկայի ոլորտներում նախատեսվող ծրագրերին, կարևորվել է նաև ընթացիկ բյուջետային աջակցության ծրագիրը: Քննարկվել են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի կարիքները և դրանց հասցեագրման հնարավոր տարբերակները, ինչպես նաև նրանց ինտեգրման մեխանիզմների ֆինանսավորման հարցերը:

Հանդիպումներ են կայացել նաև ԱՄՀ՝ Հայաստանը ներկայացնող գործադիր տնօրեն Փոլ Հիլբերսի և ԱՄՀ հայաստանյան առաքելության ղեկավար Իվա Պետրովայի հետ: Կողմերն անդրադարձել են ԱՄՀ-ի հետ ընթացիկ համագործակցության շրջանակներում իրականացվող բարեփոխումներին, ԱՄՀ եռամյա Պահուստային ծրագրին և վերջինիս ներքո երրորդ վերանայման աշխատանքներին:

Իվա Պետրովայի ու նրա թիմի հետ մանրամասն քննարկումներ են ծավալվել ԱՄՀ եռամյա Պահուստային ծրագրի ներքո ամրագրված բարեփոխումների, ներառյալ՝ ֆիզիկական անձանց աուդիտի, «Բյուջետային համակարգի մասին» օրենքի փոփոխությունների, ՖՆ գործառութային վերանայման, պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակի շուրջ: Ֆիզիկական անձանց աուդիտի առնչությամբ նշվել է, որ ՀՀ կառավարության ներսում այդ մասով համաձայնություն առկա չէ, և անհրաժեշտ կլինի նշյալ կառուցվածքային հենանիշը փոխարինել մեկ այլ բարեփոխումով: Ինչ վերաբերում է պետական բյուջեի դեֆիցիտի մակարդակին, չնայած ԱՄՀ-ի կողմից առաջարկվել է 4.6%, ՖՆ կողմից նշվել է 5.5% մակարդակի իրատեսականությունը և այդ ցուցանիշով առաջնորդվելու անհրաժեշտությանը:

Համագործակցության բավականին լայն օրակարգով արդյունավետ քննարկումներ են տեղի ունեցել ՀԲ փոխնախագահ Անտոնելլա Բասսանիի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի նախագահ Օդիլ Ռենո Բասոյի, ԱՄՀ Միջին Արևելքի և Կենտրոնական Ասիայի վարչության տնօրեն Ջիհադ Ազուրի, ԱՄՀ հարկաբյուջետային հարցերի վարչության, Եվրոպական ներդրումային բանկի, ԱՄՆ գանձապետարանի, Միջազգային ֆինանսական կորպորացիայի, բարձրաստիճան ներկայացուցիչների հետ հանդիպումների շրջանակներում:

ՀԲ փոխնախագահ Անտոնելլա Բասսանիի հետ հանդիպմանը կողմերն անդրադարձել են ինչպես ընթացիկ համագործակցությանն առնչվող հարցերին, այնպես էլ առաջիկայում ջրային, առողջապահության և էներգետիկայի ոլորտներում նախատեսվող ծրագրերին, կարևորվել է նաև ընթացիկ բյուջետային աջակցության ծրագիրը: Քննարկվել են նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայերի կարիքները և դրանց հասցեագրման

հնարավոր տարբերակները, ինչպես նաև նրանց ինտեգրման մեխանիզմների ֆինանսավորման հարցերը:

ՎԶԵԲ-ի նախագահ Օդիլ Ռենո Բասոյի հետ երկխոսությունը ծավալվել է հիմնականում 2024թ. մայիսի 14-16-ը Երևանում ՎԶԵԲ 33-րդ տարեկան հանդիպման կազմակերպման նախապատրաստական աշխատանքների առաջընթացի, ինչպես նաև «Միջին միջանցքում» Հայաստանի մասնակցության հնարավորությունների շուրջ:

Նշյալ հանդիպումների մեծ մասի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև գլոբալ և տարածաշրջանային անվտանգային ռիսկերին և դրանց առարկայանալու պարագայում հնարավոր արձագանքմանը:

Միաժամանակ, ՀՀ ՖՆ պատվիրակությունը մասնակցել է Հայաստանն ընդգրկող Ընկերակցային խմբի և ԱՄՀ Կովկասի ու Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի նախարարների ու կառավարիչների հետ համատեղ հանդիպումներին:

Երկկողմ հարթակում ՖՆ պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել Նիդերլանդների, Չեխիայի, Գերմանիայի, Սլովենիայի պատվիրակությունների հետ: Քննարկվել են ընթացիկ համագործակցության ակտիվացմանն ու շրջանակի ընդլայնմանն ուղղված հարցեր, անդրադարձ է կատարվել նաև առաջիկայում Երևանում կայանալիք Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի տարեկան հանդիպմանը, մասնավորապես, հայկական կողմը վերահաստատել է տարեկան մասնակցության հրավերները՝ ուղղված գործընկեր երկրների համապատասխան ներկայացուցիչներին:

ՖՆ պատվիրակության օրակարգի կարևոր մաս են կազմել միջազգային կապիտալի շուկայում ՀՀ գործընկերների ու ներդրողների հետ հանդիպումները: Առանձին քննարկումներ են կայացել «J.P. Morgan», «Citi», «Morgan Stanley»-ի ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում անդրադարձ է կատարվել ՀՀ տնտեսական իրավիճակին և ապագա համագործակցության հարցերի:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպումների և քննարկումների ընթացքում որոշումներ չեն ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

Ստորագրությունը, ամսաթիվը՝

29 ապրիլի 2024թ.